Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ ԹԻՎ 112-123 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 112-123 որոշումների ամսաթվերը և ստորագրման ամսաթվերը սխալ են գրառվել:

Թիվ 114 որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասին: Որոշման հղումը թերի է, բացի այդ որոշման համարակալումը սխալ է կատարված:

Թիվ 115 որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասին:

Որոշման հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին սխալ է կատարված:

Որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասին և 19-րդ հոդվածի 2-րդ մասին: Որոշման դրույթները անհրաժեշտ է համարակալել:

Թիվ 116 որոշման վերնագիրը կիսատ է գրառված: Որոշման անբաժանելի մաս համարվող բոլոր հավելվածները անհրաժեշտ է համարակալել ըստ հերթականության:

Թիվ 118 որոշման 1-ին կետում համայնքի անվանումը թերի է գրառված:

Թիվ 121 որոշման դրույթների համարակալումը սխալ է գրառված:

Թիվ 122 որոշման նախաբանում «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքին կատարված հղումը սխալ է: Հղում պետք կատարվեր «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասին:

Թիվ 123 որոշման դրույթները անհրաժեշտ է համարակալել:

Թիվ թիվ 112-123 որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը:

Կատարող Ս. Ավետիսյան
15.10.2020թ.